

# ԲԱՆԱԿԵՃՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ. ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ. DISCUSSIONS

---

## ՀԱՅ-ԽՈՒՌԱՊԻՐԱՏԱԿԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Գլխավոր գիտաշխատող, բ. գ. դ.

alpehist@gmail.com

DOI: 10.57236/1829-0183-2024.2(31)-20

### Համառուղագիր

Հոդվածում խուռապուրատական ստուգաբանություններ են առաջարկվում մի շարք հայերեն արմատների և ածանցների համար:

Հայ. թիւ «համրանք, թվանշան», թիւասել «ասել, խոսել», հմմտ. խուռ. tive/tivə «բառ, բան»:

Հայ. խաղ «խաղ, պար, հանդիսություն, երգ», հմմտ. խուռապուրատ. էլս «ձես, հանդիսություն»:

Հայ. շունչ «շնչառություն», «հոգի, մարդ», հմմտ. խուռ. շնուր «հոգի»:

Հայ. խրախ «ուրախ, ուրախություն, խնջույք», հմմտ. ուրարտ. իւր- «խմել»

Հայ. խարիսխ, խորիսխ բառերը, ուրարտերենում հայտնի -ք (սեպագիր-ք) ածանցի պատճառով, համարվում են ուրարտական փոխառություններ:

Հայ. վերջածանցներ -ախ, -ոխ, -ուխ, -եխ, հմմտ. ուրարտ. -ի (= ի) ածանցը, որը տարբեր ձայնավորներով վերջացողարմատների հետ համանման ձևեր է առաջացնում:

Հայ. խրախ (\*խուր-ախ) «ուրախ, ուրախություն, խնջույք», ուրարտ. իւր-«խմել»: Տարբեր լեզուներում «խմած, կոնծած» իմաստով բառերը կարող են ձեռք բերել «ուրախ», «բարձր տրամադրությամբ» նշանակությունը, և ընդհակառակը:

Հայ. ուրախ բառի զարգացումը կարելի է պատկերացնել այսպես՝ խուր-ախ, տարնմանությամբ՝ հուրախ, հ-ի անկումով՝ ուրախ, իսկ դիսուր-ն ուղղակի դր-ժիստականով՝ դր-խուր:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** Հայոց լեզվի պատմություն, ստուգաբանություն, հայերեն, խուռերեն, ուրարտերեն, խուռապուրատական լեզուներ:

## ARMENO-HURRO-URARTIAN ETYMOLOGIES

ARMEN PETROSYAN

Institute of Archaeology and Ethnography NAS RA

Principal researcher, doctor of philology

alpehist@gmail.com

### Abstract

The article suggests Hurro-Urartian etymologies for several Armenian words and suffixes.

Arm. *թիւ* "number, digit", *թիւ ասել* "to speak, to say", cf. Hurr. *tive/tiwə* "word, thing".

Arm. խաղ "game, dance, ceremony, song", cf. Hurro-Urart. *ḥalu* "ritual, ceremony".

Arm. շունչ "breathing", "soul, man", cf. hurr. *šūni* "soul".

Arm. խարիսխ "support, base, anchor" խորիսխ "honeycomb" due to the suffix -սխ (cf. urart. -šhi) are to be Urartian borrowings.

Arm. suffixes-ախ, -նխ, -ուխ, -եխ would trace back to the Urartian suffix -hi (= հօ), which with different preceding vowels creates similar endings.

Arm. խրախ "fun, joy, feast", cf. Urart. *ḥur-* "to drink". Words and expressions meaning "drink, drunk" in various languages get the meanings "cheerful, in a good mood" and a vice versa.

Arm. ուրախ "cheerful; joyfully" can be derived from the form խուրախ< urart. \**ḥuraḥi*, then, with dissimilation of the first consonant – հուրախ>ուրախ, while սխուր "sad" is formed with the negative prefix un.

**Keywords and phrases.** Armenian language, history of Armenian language, etymology, Hurrian language, Urartian language, Hurro-Urartian languages.

## АРМЯНО-ХУРРО-УРАРТСКИЕ ЭТИМОЛОГИИ

АРМЕН ПЕТРОСЯН

Институт археологии и этнографии НАН РА,

Главный научный сотрудник, доктор филологических наук

alpehist@gmail.com

### Аннотация

В статье предлагаются хурро-урартские этимологии для ряда армянских корней и суффиксов.

Арм. թիւ «число, цифра», թիւ ասել «говорить, сказать», ср. хурр. *tive/tiwə* «слово, вещь».

Арм. խաղ «игра, танец, церемония, песня», ср. хурро-урарт. *ḥalu* «ритуал, церемония».

Арм. շունչ «дыхание», «душа, человек», ср. хурр. *šūni* «душа».

Арм. խարիսխ «опора, база, якорь» խորիսխ «соты» из за суффикса -սխ (ср. урарт. -šhi) считаются урартскими заимствованиями.

Арм. суффиксы -ախ, -ոխ, -ուխ должны восходить к урартскому суффиксу -ի (= իօ), который с основами оканчивающими на разные гласные создает подобные окончания.

Арм. իրախ «веселье, радость, пир»,ср. урарт. իոր- «пить». Слова и выражения означающие на разных языках «выпивший, пьяный» получают значения «всеский, с хорошим настроением» и наоборот.

Арм. ուրախ «веселый; радостно» может восходить к форме իուրախ<урарт. \*իուրախ<sup>1</sup>, с диссимиляцией первого согласного –ի > ուրախ, а տիուր«грустный, грустно» образован с отрицательным префиксом տ.

**Ключевые слова и словосочетания.** Армянский язык, история армянского языка, этимология, хурритский язык, урартский язык, хурро-урартские языки:

Հայ. \*թիւ «համրանք, թվանշան», թիւասել «ասել, խոսել», խուռ. tive/tiwə «բառ, բան»

Խուռերեն tive/tiwə «բառ, բան (իր)» [1, р. 267-268; 2, S. 454-456], բառը այն շարքից է,որոնք պարզ համապատասխանություններ ունեն ուրարտերենում, հմմտ. ուրարտ. tiu, ti(ia)- «ասել, խոսել» և tini «անոն» [3, S. 77; 4, с. 48; 5, р. 122; 6, р. 219]: Ի: Դյակոնովլ, հղելով Գ. Ղափանցյանին, հայ. թիւլ համարել է փոխառություն այդ խուռերեն կամ ուրարտերեն բառերից [7, с. 201, прим. 29]: Սակայն հետագայում, համահեղինակի հետ գրված մեկ այլ աշխատության մեջ, այդ կապը համարվում է մերժելի բառերի իմաստաբանական տարբերության պատճառով [9, р. 724]:

Աճայյանը հայ. թիւ «համրանք, թվանշան» արմատի հետ հիշում է ի թիւ ասել «առանց եղանակի կարդալ» և թուել «ասել, պատմել» իմաստները և արմատը թողնում չստուգաբանված [10, էջ 186]: Գ. Զահուկյանը թիւ «թվարկում, թվանշան, համար» արմատը համարում է կապված հնդեվրոպական \*τευο-/\*τέου- «ուտչել» արմատի հետ, ազգակից բառերի թվում հիշելով հնդ. tuvas «ուժեղ, հզոր», ռուս. тысяча «հազար» բառերը [11, էջ 267]:

Գրաբարում թիւ, թուել, թիւ ասել, թուելեաց երգ բառերի և արտահայտությունների ունեցած իմաստներին մանրամասն անդրադարձել է Մ.

<sup>1</sup> Ուրարտ. բառը հայտնի է մի քանի քերականական ձևերով և տարբեր բառարաններում ներկայացվում է տարբեր կերպ՝ tiau-, ti(ja)u (Գ. Մելիքիշվիլի, Ն. Հարությունյան), ti- (Մ. Խաչիկյան, Գ. Վիլիկյան), ti(ja)l, ti(ja)-, tiu (Մ. Սալվինի):

<sup>2</sup> Ղափանցյանի աշխատություններում այդ ստուգաբանությունը մեզ գտնել չհաջողվեց՝ նա խուռ. tiwe-ի հետ փորձել է համեմատել հայ. թոթովեմ և թովեմ բառերը [8, с. с. 294-295]:

Աբեղյանը իր մի աշխատության մեջ, որը Աճառյանը հիշում է որպես «լավագույն բացատրություն»: Ահա Աբեղյանի եզրակացությունները համարուտ: Թիւ բառը, ինչպես և թուել բայց սկզբնապես «ասել, պատմելու» իմաստ է ունեցել և թիւ ասել-ը ուղղակի նշանակում է «ասել» (հմմտ. տաղ ասել, երգ ասել ևն): Եվ «թուելեաց երգը» միանգամայն համապատասխանուած «երգ վիպասանացին»՝ «(վեպ) պատմողների/ասացողների երգ» իմաստով: Ընդ որում, մի շարք ուրիշ լեզուներուաւ ևս (հունարեն, լատիներեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, ռուսերեն) «ասել, պատմել» և «թվել, հաշվել» բառերը արտահայտվուած են նույնարմատ բառերով [12, 84-89]: Սա, ի միջի այլոց, լուծուած է «բառ» և «թիվ» իմաստաբանական հակասությունը, և ուրեմն, հայերեն և խուժիերեն բառերի կապը միանգամայն հնարավոր է:

Եվ եթե «(ի) թիւ ասելը» նշանակում է ուղղակի «ասել», ապա թիւ-ը այստեղ պետք է նշանակի ուղղակի «խոսք, բառ, բան», որպես «խոսք/բառ/բան ասել», այսինքն՝ թիւ-ը ուղղակի նույնանուած է խուժիական տիւ-ին (հայերենուած վերջին ծայնավորի կանոնավոր անկմամբ, որը տեղի է ունեցել մ.թ. առաջին դարերին): Խուժիական և ուրարտական բառերի ազգակցությունից հետևուած է, որ այդ արմատը խուժառուարտական է և, ուրեմն, նրա հնդեվրոպական ծագումը կասկածելի է: Եվ եթե թիւ- «բառ, խոսք» և «թիվ, թվանշան ևն» նշանակություններով արմատները մի շարք լեզուներուած նույն ծագումն ունեն, ապա միանգամայն հավանական է, որ այդ հայ. բառի երկիմաստությունը եղել է նաև փոխատու լեզվուած խուժիերենուած կամ ուրարտերենուած, որը չի բացահայտվուած հայտնի աղբյուրներուում: Բազմիմաստության տեսակետից հետաքրքիր է նշել նաև հայերեն բան-ի և խուժ. տիւ-ի ընդհանուր «իր» իմաստը:

**Հայ. խաղ «խաղ, երգ, պար, հանդիսություն», խուժառուարտ. իւլս «ծես, հանդիսություն»**

Հին հայ. խաղ նշանակում է «երեխայի, լարախաղացի, ծաղրածոփ ևն խաղ», «տեսարանն կամ տաղաւարն խաղացողաց», «թատրոն», «պար», «ծաղր, կատակ», «երգ, հատկապես աշխարհիկ երգ», որից՝ խաղալ «խաղ խաղալ», «պարել», «ծաղրել», «ուրախությունից խայտալ», «շարժվել, արշավել», խաղալիկ «պարող», «խաղալիք», խաղարար «պարող, կաքավող» և այլն [13, 913]:

**Հ. Աճառյանը արմատը թողնուած է առանց ստուգաբանության, իսկ Գ. Զահուկյանը կասկածով փորձուած է կապել հնդեվրոպական \*kel- «քշել,**

արագ շարժել» և \*(s)k(h)e- «ծոել, հենել, ծուռ» արմատների հետ [11, 311]: Ուրարտական տեքստերի թան բառն սովորաբար թարգմանվում է որպես «ծես, արարողություն» (ավանդված է հոգնակի թալու/ե ծնու) [14, c. 396]: Նոյն թալու ծնը հանդիպում է խոտիերենում, և, կարծում են, որ նույն նշանակությամբ [4, c. 46; 2, S. 119]: Սեպագրում օ-ի համար առանձին նշաններ չկան, և այն հաղորդվում է ու-ով (ուրարտական սեպագիր ու-ն, համարյա միշտ, հաղորդում է օ հնչյունը) [15, c. 50]: Այսպիսով, ուրարտ. թալու-ն կարող է վերականգնվել որպես խօ-, որն ուղղակի նոյնական է հայ. խաղ-ին (սեռ. խաղոյ, որ ցույց է տալիս, որ հնում, մինչև վերջին ձայնավորի անկումը, այն հնչել է \*խօ):

Խոտիերենում, բացի թալու-ից, հայտնի են մի շարք համահունչ բառեր, որոնցից մի մասն ակնհայտորեն, մի մասն էլ վարկածային ծնով, բանի որ բառերի իմաստը լրիվ պարզ չէ, կարող են կապվել հայ. խաղ-ի հետ [2, S. 119-122]: Դրանցից պետք է նշել հատկապես խ- «երգել» (?), խալմե/ի «երգ» (հմմտ. և խալմի պաշտամունքի կամ զրհաբերության հետ կապված մի տերմին, որը նոյնպես համեմատում են ուրարտ. թալու-ի հետ) [2, S. 119]: «Երգելու» դեպքում հարցը պարզ է՝ հմմտ. հայ. խաղ, խաղիկ «երգ»: Խոտիերենում -m(m)e/i-ն բառիմաստը շատ չփոխող վերջանց է, հմմտ. օրինակ ուրարտ. pura և խուռ. purame, purammi «ստրուկ» բառերը<sup>3</sup>: Ակնհայտորեն նոյն արմատն է ենթադրում խոտիերենին հարևան հնագույն փոքրասիական լեզվի՝ խեթերենի խալլի(ya)ri «(ծիսական) երգիչ» բառը, որին ոչ խեթական՝ խաթական ծագում է վերագրվում և թ. Շուլտհայսի ու Զ. Գրեպինի կողմից արդեն համեմատվել է հայ. խաղ-ի հետ [20, p. 30-31]<sup>4</sup>: Խոտառլարտերեն և խաթերեն այդ բառերի արմատը, ամենայն հավանականությամբ, փոխառություն է մի լեզվից մյուսին: Հետաքրքիր է, որ առավել հին գրավոր լեզուներում խեթերենում (< խաթ.) և խոտիերենում արմատը հանդես է գալիս ածանցված և միայն ավելի նեղ «երգ» իմաստով, մինչդեռ ուրարտերենում վերականգնվում է ավելի լայն «խաղ, ծիսական խաղ, հանդիսություն,

<sup>3</sup> Վիլիելմը որպես այս ածանցով հիշում է նաև մի շարք այլ բառեր՝ սլմե/ «ստրկուիի», elami «երդում», olimi/e «զենք», tazme «նվեր»? [5, p. 89]:

<sup>4</sup> Պուհելը, առանց լուրջ պատճառաբանության, մերժում է համեմատությունը հայ. խաղ-ի հետ, ինչը ճիշտ կերպով քննադատվել է Զ. Գրեպինի կողմից [21, p. 86]:

ծես» իմաստները: Այսպիսով, ուրարտերենը (որից և հայերենը) պահպանել է բառի հնագույն իմաստը, իսկ խութերենում և խեթերենում ավանդված են արմատի միայն մասնավոր իմաստով ածանցյալ ծևեր:

Վերջերս նորից հիշվում է թալուլի-ի՝ ժամանակին Սանտալճյանի կողմից առաջարկված «խաղող» մեկնաբանությունը: Ուրարտերենին մերձավոր ազգակից խութերենում էլ հայտնի է թալուլ-«ինչ-որ միրգ» բառը, և հավանական է, որ այն նշանակել է «խաղող» [16, c. 27; 17, c. 445; 18, p. 261; 2, S. 122]: Նկատենք, որ դա չի հակասում թալուլի-ի «խաղեր, հանդիսություններ» մեկնաբանությանը: Ուրարտ. թալու-ն կարող է նշանակել «խաղ, խաղային հանդիսություն», իսկ թալուլ-ն՝ «խաղող», որը պատահական նմանություն ունի թալու-ի հոգնակի թալուլ «խաղեր» ծևի հետ (այստեղ թերևս ի հայտ է գալիս տարբեր բառերի այնպիսի մի համահնչյունություն, ինչպես հայ. խաղող «խաղող» և բրբռ. խաղող «երգասաց, դերասան» բառերի դեպքում): Եթե այդպես է, ապա թալուլ-ն պետք է թարգմանվի մի դեպքում «խաղեր, ծես/հանդիսություններ», մյուտում «խաղող», ըստ համատեքստի:

Ուրարտուում, առավել քան այլուրեք իին աշխարհում, կարևորագույն դեր են կատարել խաղողի և գինու մշակույթը և դրանց առնչվող առասպելաբանական պատկերացումները և ծեսերը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ հենց Անդրկովկասը և Հայկական լեռնաշխարհն են եղել խաղողի մշակության հայրենիքը [այդ մասին տես 24, էջ 12-30; 25, c. 24-43; 26, c. 143-147; 27, c. 102-117; 28, էջ 261-265]: Ուրարտական արձանագրություններում բազմիցս հիշվում են խաղողաների հիմնումը, ապա և գերագույն աստված «Խալդիի դարպասներ» կոչվող տաճարների առջև խաղողի հասունացման տարբեր փուլերին նվիրված հանդիսությունները [տես օրինակ 29, էջ 10, 76-78]: Ընդ որում, Խալդին, ի թիվս այլ գործառույթների, եղել է նաև խաղողագործության և գինու/գինեխմության հովանավորը, ինչպես հունական Դիոնիսոսը [28, էջ 263-273]:

### **Հայ. շունչ, խուռ. շնոր «հոգի» (?)**

Հայոց, ինչպես և շատ այլ ժողովուրդների արխակի պատկերացումներում, հոգին պատկերացվել է որպես շունչ, քամի կամ օդային մի էակ,

<sup>5</sup> Այս բառի համար առաջարկվել է նաև «հացկերույթ» մեկնաբանությունը [19, c. 88]:

ըստ որի, հայերենում շունչ, ոգիկամ հոգի բառերը որպես հոմանիշ են ընկալվում [30, էջ 16]: Եզնիկ Կողբացին գրում է, որ ոգու և հողմի անվանումները երրայերեն, հունարեն և ասորերեն ևս նոյնական են [31, էջ 73]: Նոյն երևոյթը հայտնի է և այլ լեզուներում, հմմտ. օրինակ ռուս. դyx «ոգի», դుշա «հոգի» և դյտե «փչել» բառերի հարաբերությունը: Այսինքն՝ շնչառությունը ընկալվել է որպես մարդու բնորոշ հատկանիշ (շունչ/հոգի ունեցող էակ՝ մարդ):

Ըստ Աճայանի, հայ. շունչ «օդի փյուն», «շնչառություն» և «հոգի, մարդ» նշանակությունների հարաբերությունը նոյնն է, ինչ որ հեր «հեք, հլոց», հով «հով, քամի», և հոգի «հոգի, ոգի», «շունչ, մարդ» բառերում, որոնք նոյնպես ծագում են շունչի համադրելի «փչել, ուռչել» նշանակությամբ արմատից (հնդեվրոպական \*peu-) [33, էջ 89-90; 11, էջ 459; հմմտ. 32, թ. 713-714, 745]: Շունչ բառն ընդունված ստուգաբանություն չունի. Աճայանը այն վարկածային ձևով համարում է բնածայնային, կազմված 2 պարզ ձայնից և չ ածանցիչներով (հմմտ. հնչել, մնչել ևն) [33, էջ 535], իսկ Զահովյանը գրում է՝ «թերևս բնածայնական կազմություն» և հղում Աճայանին [11, էջ 594]: Ի. Դյակոնովիլ և Ս. Ստարոստինը իրենց մի հոդվածում, որտեղ փորձում են հիմնավորել խուռառդարտական և հյուսարևելակովկասյան լեզուների ազգակցությունը, ի թիվս այլոց վերականգնում են խուռառդարտ. \*սն (կամ ստ-ո՞), արմատը, ըստ խուռ. սնու «հոգի, շնչառություն» բառի, որը ծագեցնում են այդ լեզուների ենթադրյալ միասնական նախնու ֊սն(t'V) արմատից, հմմտ. ռարգիներեն սնու «հոտ», լակերեն սնու «քթախոտ», ավարերեն սնու'-ize «հոտ քաշել» և սնու' «քթախոտ» [34, թ. 178]:

Այդ մասին կարելի է ասել հետևյալը: Ներկայումս խուռառդարտերենի և հյուսարևելակովկասյան լեզուների ազգակցության գաղափարը համընդիանուր ընդունելություն չի գտել, և եթե նույնիսկ այն կա, ապա չափազանց հեռու է [5, թ. 81]: Ապա, հերինակներն իրենք էլ որոշ չափով կասկածելի են համարում այս արմատի իրենց վերակազմությունը: Ասուրերեն և նրանից յուրացրած սեպագրում (խուռիական, խեթական, ուրարտական) չ-ով հաղորդվել է հիմնականում ս հնյունը, և խուռիերեն չսու (կարդալ՝ սունը/շունը) բառը, որը է. Լարոշը թարգմանել է որպես «հոգի (?)» [1, թ. 243], ներկայացրել են որպես «հոգի, շունչ» և մոտեցրել կովկասյան լեզուների «հոտ, հոտ քաշել» նշանակությամբ բառերին:

Ներկայումս Դյակոնովի և Ստարոստինի այդ մեկնաբանությունը հակված էն համարել «հնացած» [2, 413-414]:

Ժամանակակից բառարաններում հյուսիսկովկասյան «հոտ քաշել» իմաստով բառերը ներկայացված են այսպես. դարձ. սոնտիկլես, սոնտիբրես, լակ. սոնտի սին, ավար. սոնտիզե (այսինքն՝ սոնթ- ձևով): Քարթվեական լեզուներում էլ կան սրանց համադրելի ձևեր: Այնտեղ վերականգնվում են \*s1wen- / \*s1wn- և և \*s1wer- «շնչել, հոգոց հանել (հանգստանալ)» արմատները, որոնք զանական (լազա-մեգրելական) ճյուղում հանդես են գալիս նախաձայն շ-ով՝ իմմտ. մեգր. շնան- «շնչել, հոգոց հանել», շնանշ/շվանջ/ «հանգստանալ» [35, թ. 179-180]: Գ. Կիմովը հիշում է, որ Ն. Մառը հայ. շունչ բառը համարում է փոխառված զանականից, բայց գտնում, որ այն կարող է նաև հնդեվրոպական ծագում ունենալ (Աճառյանն էլ բերում է քարթվելական մի շարք ձևեր, որոնք շատ նման են հայ. շունչին՝ վրաց. suni «շունչ, հոտ» և գավառական մեգրել. շնանշ /շունջո/ «հոգի»): «Հոգու» համար վերականգնվում է քարթվելական \*s1ul- «հոգի» արմատը» (վրաց. suli, մեգր. šuri), բայց «հոգի, ոգի» և «շունչ» հասկացությունները վրացերենում ունեն նաև սոն- արմատով ձևեր՝ suni «հոտ, ոգի, հոգի», suntkva /սոնթքվա/ «շնչել»: Այս վերջին ձևն ակնհայտորեն նույնական է հյուսիսկովկասյան վերականգնվող \*շոն(t'V)-ին, և ուրեմն, այդ ձևերն ունեն ընդհանուր ծագում: Եվ եթե ճիշտ է խուռ. շնու-ի «հոգի» մեկնաբանությունը, ապա այն նույնպես պետք է միավորվեր սրանց հետ:

Այսպիսով, հայ. շունչը, թեև կարող էր բնաձայն ծագում ունենալ, բայց, քանի որ այն շատ նման է քարթվելական արմատի զանական ձևերին, կարող է փոխառված, կամ գոնե ազդված լինել դրանցից (հայ-քարթվելական հին ընդհանրությունները հիմնականում զանական ձևերի հետ են): Իսկ եթե ճիշտ է խուռ. շնու-ի «հոգի» մեկնաբանությունը, ապա այն հավանաբար անբաժանելի է քարթվելական և հյուսիսկովկասյան համահոնչ բառերից և հայ. շունչից:

### **Հայ. -ախ, -ոխ, -ուխ, -եխ ածանցները**

Սրանք առանձնացվում են խաղախ «կաշի», կամախ «նվեր», կանձոխ «կացնի կոթ», մեղմեխ «նենգ», պարեխ «ժայռ» և նման բառերի հիման վրա: Գ. Զահորկյանը կարծում է, որ դրանք կարող են ուրարտական ծագում ունենալ [11, էջ 794]: Ներկայումս այդ մասին կարելի է

վստահորեն ասել: Խուռառուրտական բառակազմական -ի (=ի) ածանցը [5, S. 91], որն ուրարտական աղբյուրներում շատ տարածված է որպես երկրանոնների վերջավկորություն (հմմտ. օրինակ Եթիուխի, Դիանակի, Ուելիքուխի, Արիշանիխի երկրանոնները), բացի այդ, օ/ու, ի/ե և ա հիմքերով ստեղծում է ածականներ և գոյականներ, օրինակ, taraiuի (հմմտ. tarayə «ուժեղ, հզոր»), babanaի «լեռնաստան» (հմմտ. babani «լեռ, սար»), teri «տնկադաշտ» (հմմտ. ter- «տնկել, հիմնել») [5, S. 111]:

### **Հայ. -իսի ածանցը**

Հանդիպում է խարիսխ և խորիսխ բառերում: Ըստ Գ. Զահուլյանի, «կարելի է ենթադրել ուրարտական ծագում» [11, էջ 807]: Եվ իրոք, հետագայում պարզվել է որ -ք-ն (սեպագիր -շի) ուրարտերենում բարդ ածանց է՝ չե վերացական ածանցին ավելացել է -ք-ն (ինչպես ասվեց, ուրարտական սեպագում չ-ն հիմնականում հաղորդում է ս հնչյունը): Այդ ածանցով հայտնի են խրիշե «Զրամատակարարում», տւիշե «մաքուր տեղ» (?), սրիշե «զենք, ռազմական հանդերձանք» բառերը [5, S. 111]:

### **Հայ. խարիսխ**

Այդ բառը նշանակել է «պատվանդան, հատակ», «ցած բեմ», որը հետագայում այլ իմաստներ է ծեռք բերել: Աճառյանը և Զահուլյանը այն թողնում են առանց ստուգաբանության [10, էջ 245; 11, էջ 321]: Խուռիերենում և ուրարտերենում հայտնի է իրi «ճանապարհ» բառը, որը համադրելի է խարիսխ-ի «հատակ, հիմք» նշանակության հետ, հատկապես եթե ճանապարհը պատկերացվի որպես հիմք՝ կառուցված (ասենք, սալսահատակված) մի բան, որի վրա է տեղի ունենում երթևեկը: Բառը, ըստ Աճառյանի, հայերենից անցել է վրացերեն, որտեղ ներկայացված է բավական տարբեր իմաստներով՝ xarisxi «աստիճան», xarisxevani «արժանավոր, աստիճանավոր», mexarisxi «դասական», aghxarisxuli «աստիճանավոր»: «Ճանապարհ» և «պատվանդան» իմաստներից մինչև «աստիճան» (վեր տանող կառուց/ճանապարհ), դժվար չէ պատկերացնել, և վրացերենում էլ, թերևս, պահպանվել է ինը «ճանապարհ» իմաստի հիշողությունը:

### **Խորիսխ «մեղրահաց, մոմով մեղր»**

Հաշվի առնելով ածանցի ծագումը, կարելի է ենթադրել, որ խոր-ը ուրարտերեն նշանակել է «մեղր» կամ մեղրի հետ կապված մի բան:

<sup>6</sup> Սա թերևս մշակութային «թափառող տերմին» է, հայտնի ինը եգիպտոսից մինչև միջագետք և սիրիա, հմմտ. հատկապես աքաղ. ḫarrānu [2, 132-133]:

Աճայանը բառը թողնում է առանց ստուգաբանության, բայց ներկայացնում է Ս. Բուզգեի կարծիքը, ըստ որի, բառի արմատը համեմատվում է հուն. *kēros*, *kērion*, լատ. *cera*, լիտվ. *koris* և լատվ. *kārītes* «մեղրամոմ» բառերի հետ, հմմտ. և կապադովկյան հունարեն *korokko* «մեղրահաց»: Զահուկյանը նույնպես հիշում է Բուզգեի ստուգաբանությունը, ավելացնելով «թերևս պատկանում է զուգահեռների այն խմբին, որոնց համար Պոկոռնին վերականգնում է \**kār-* «մեղրամոմ» արմատը, սակայն լատիներենը և հայերենը ցույց են տալիս այլ ձայնավորում»: Ըստ հունարենի նորագույն ստուգաբանական բառարանի, լատ. *cera*-ն փոխառություն է հուն. *kēros*-ից, որը բայթիական լեզուների նշված բառերի հետ չի կարող մեկ միասնական հնդեվրոպական հիմքի բերվել և, ըստ այդմ, օտար ծագում պիտի ունենա [36, թ. 689-690; նոյնը տես և 37, թ. 527]: Վերջին ժամանակներս հունարենում փորձում են գտնել խորանուրարտական նշանակալի հետքեր [տես օրինակ 38, թ. 39-50, որտեղ հավանական է համարվում հունական մեծ աստվածներ Արտեմիսի, Ապոլոնի և նրանց մայր Լետոյի խորանուրական ծագումը], և նոյնիսկ կարծիք կա, որ Կրետեի մինոյան գծային Ա գրով տեքստերի լեզուն խորիական է [39]: Ըստ այդմ, չի կարելի բացառել, որ նշված հունարեն բառերը փոխառված լինեն խորանուրարտականների հետ ինչ-որ կերպ առնչվող փոքրասիական մի լեզվից (սեպագիր Ե-ի՝ հունարենում կով արտացոլման համար հմմտ. սեպագիր Խլակք և հուն. Կիլիկիա համապատասխանությունը):

**Հայ. խրախ «ուրախ, ուրախություն, խնջույք», ուրարդ. իւր-«խմել», «ուրախանալ»**

Ժամանակին Ս. Տերվիշյանը բառի արմատը ենթադրել է խոր-, որից և -ախ ածանցով՝ խորախ, նախաձայնի անկմամբ՝ ուրախ, և տժխտականով՝ տ-խոր «ոչ ուրախ, տխոր»: Աճայանը ստուգաբանում է խրախ-ը ուրախ-ի սաստկական հուրախ ձևից, խորախ>խրախ անցումով: Տերվիշյանի կարծիքի հետ որոշակիորեն համաձայն է Եղել Ա. Մեյեն (նա բառի ամբողջական ձևը դրել է խորախ, որից ձևացել են ուրախ և խրախ ձևերը), որը հետո ընդունել է Աճայանի ստուգաբանությունը [10, էջ 429]: Զահուկյանը խրախ-ը համարում է փոխառություն իրանական չավանդված մի ձևից, հնդեվրոպական «ցատկել, ցատկուտել» իմաստով մի արմատից (ըստ Հ. Բեյլի) [11, էջ 353]:

Ներկայումս Տերվիշյանի և Մեյեի ստուգաբանությունները կարող են ճշտվել ուրարտական նյութով: Ուրարտերենում, ինչպես ասվեց,

հայտնի է Կորիշի բառը, որը թարգմանում են «ոռոգող, ոռոգիչ» [14, c. 396; 17, c. 447], «նա որ խմեցնում է» [4, c. 47], «ջրամատակարարում» [2, S. 172-173] նշանակություններով: Համադրելով այն խուժիերեն կյուրքի «Թեշուր աստծու ծեսի ինչ-որ անոթ, ոիտոն» [2, S. 172-173] բառի հետ, կարելի վերականգնել խուժառուարտական \*կոր- «խում, խմել» արմատը [4, c. 47] (խմել/ըմպել/արբել նշանակությամբ արմատներից «ոռոգել» և «գավաթ» նշանակությունների զարգացման համար հմտ. հայ. Արբուցանել «խմեցնել հարբեցնել, ոռոգել», ջրարբի «ոռոգովի, ոռոգված» և ըմպանակ, ըմպարան «բաժակ», ըմպաման «փարչ», ըմբոց «ջուր խմելու աման» բառերը [33, Էջ 599]:

Խմելը տարբեր լեզուներում հաճախ ձեռք է բերում նաև «ալկոհոլային խմիչք խմել», «հարբել» նշանակությունները (հմտ. հայ. խմել, ոռա. ուտե, անգլ. drink «խմել, հարբել»): Խրախսի «ուրախ, խնջույք» նշանակությունները թույլ են տալիս այդ բառը մեկնաբանել որպես ուրարտերեն կազմություն, կոր- «խմել» արմատից, -աթ ածանցով՝ խուժախըր, որը, հայերենի զարգացման օրինաչափություններով կանոնավոր կերպով դարձել է խրախս: «Խմած, կոնծած» իմաստով բառերը կարող են ձեռք բերել «ուրախ», «բարձր տրամադրությամբ» նշանակությունը, և ընդհակառակը, վերջին իմաստով բառերը կարող են ստանալ «հարբած, կոնծած» նշանակությունը, հմտ. հայ. բեֆը լավ (այսինքն՝ «բարձր տրամադրությամբ») և ոռա. հաւեսելու (բառացի՝ «ուրախ վիճակում») որոնք նշանակում են «կոնծած, հարբած», այսինքն՝ ուրախ լինելը և բարձր տրամադրությունը հավասարեցվում են խմած/հարբած լինելուն: Ավելացնենք նաևզվարճաւեր բառացի՝ «ուրախություն սիրող», բայց և «խրախճանամոլ, ուտող-խմող» և բեֆ անել «կոնծաբանել», բայց և «ուրախանալ»[40, Էջ 203, 671] տիպի բառերն ու արտահայտությունները: Այստեղ նորից հիշենք, որ ամբողջ հին աշխարհում չկար որևէ երկիր, այդքան զարգացած լիներ գինեխմության մշակույթը, ինչպես Ուրարտոն, միակը, որտեղ այն դարձել էր երկրի գլխավոր աստծու հիմնական գործառույթներից մեկը:

Զահուկյանի կողմից Աճառյանի ստուգաբանությունը մերժելու և բառին իրանական ծագում վերագրելու պատճառը խրախճան բառի իրանական ճան «ցանկացող սիրող, -սեր, -մոլ» վերջավիրությունն է: Դա իհարկե հարյուր տոկոսանց փաստարկ չէ (եթե ոչ՝ Աճառյանն իր ոչ իրանական ստուգաբանությունը չէր առաջարկի): Իրանական ծագման

արմատները և վերջավորությունները հայերենում միանում են նաև ոչ իրանական արմատների (ինչպես իրանական ծագման ածանցները հանդես են գալիս նաև ոչ իրանական արմատների հետ), իսկ -ճան-ի համար Զահուլյանն ինքը բերում է բնիկ հայկական գինի հիմքով կազմված և խրախնան-ին մոտ իմաստով գինեճան «գինեսեր/գինեմոլ» բառը, հետո միայն ավելացնելով որ այդ ածանցը հանդիպում է նաև իրանական փոխառություններում [11, էջ 808]:

Ի միջի այլոց պարտադիր չեղանակ խուռառարտական \*խր-«խմել» արմատին նաև «ուրախանալ» նշանակություն վերագրել: Հնարավոր է պատկերացնել նաև համանուն \*խր- «ուրախ, ուրախանալ» արմատի գոյությունը (այդ լեզուները մեզ են հասել չափազանց թերի բառապաշտություն): Ամեն դեպքում հայերենում խրախ(<խոր-ախ) և տխուր «ոչ ուրախ» բառերում պարզորոշ վերականգնվում է խոր- «ուրախ» արմատը, որի և՝ տեսքը և՝ -ախվերջավորությունըհավանական են դարձնում նրա խուռառարտական ծագումը:

### **Հայ. ուրախ, տխուր**

Վերն ասվածի հիման վրա այս բառերը պետք է ստուգաբանվեն քննարկվող \*խր- «ուրախ լինել» արմատից, նույնական կամ համանուն \*խր- «խմել» արմատին: Ուրախ բառի զարգացումը կարելի է պատկերացնել այսպես՝ \*խրախ>խոր-ախ, տարնմանությամբ՝ հուրախ, հի անկումով՝ ուրախ, իսկ տխուր-ն ուղղակի տ-ժխտականով՝ տ-խոր:

### **Գրականության ցանկ**

1. Laroche E., Glossaire de la langue hourrite, Revue hittite et asianique, XXXIV-XXXV, 1976-77, 323 p.
2. Richter T., Bibliographisches Glossar des Hurritischen, Harrassowitz Verlag, Wiesbaden, 2012, 667 S.
3. Diakonoff I. M., Hurrisch und urartäisch, R. Kitzinger, München, 1971, 175 S.
4. Խաչիկյան Մ., Հյուրրիտական և արարտական լեզուների համարակալի տարրերի հայտնաբերությունները, Երևան, 1985, 196 էջ.
5. Wilhelm G. Hurrian; Urartian, The ancient languages of Asia Minor, Cambridge University Press, Cambridge, 2008, 81-123.
6. Salvini M., Corpus dei testi urartei, Vol. V, edition de Boccard, Paris, 2018, 506 p.

7. Дьяконов И. М., Предыстория армянского народа, Изд. АН, Ереван, 1968, 26 с.
8. Капанцян Г. А., Историко-лингвистические работы, т. 2, Изд. АН, Ереван, 1975, 542 с.
9. Greppin J., Diakonoff I., Some effects of the Hurro-Urartian people and their languages upon the earliest Armenians, Journal of the American Oriental Society, 1991, 4, p. 720-730.
10. ԱճառյանՀ., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1973.
11. ԶահոռվյանԳ., Հայերեն ստուգարանական բառարան, Ասողիկ, Երևան, 2010, 819 էջ:
12. ԱբեղյանՄ., Երկեր, ԳԱ հրատ. Երևան, 1985, հ. Ը, 671 էջ:
13. Տես Նոր հայկացյան բառարան, հ. Ա, Երևան, 1979, 1140 էջ:
14. Меликишвили Г. А.. Урартские клинообразные надписи, Изд. АН СССР, М., 1960, 504 с.
15. ДьяконовИ. М.. Материалы к фонетике урартского языка, Вопросы грамматики и истории восточных языков, Изд. АН СССР, М.-Л., 1958, с. 27-53.
16. Мкртчян Н. А., Субстратные названия растений в армянском языке, Древний Восток 4, Ереван, 1983, с. 24-37.
17. Арутюнян Н. В., Корпус урартских клинописных надписей, Ереван, 2001, 445 с.
18. ÇilingiroğluA., SalviniM. 2001, p. 261; Richter, S. 122: Առաջարկվել Է նաև «հացկերպյթ» մեկնաբանությունը, տես ????
19. И. М. Дьяконов, Урартские письма и документы, М.-Л., 1963, с. 88:
20. PuhvelJ., Hittite Etymological Dictionary, Vol. 3, De Gruyter, Berlin, New York, 1991, 461 p.
21. Greppin J., Review of J: Puhvel, Hittite Etymological Dictionary, Annual of Armenian Linguistics. V. 13, 1992, p. 85-86.
22. Çilingiroğlu A., Salvini M., 2001, Ayanis I. Ten Years' Excavations at Rusahinili Eiduru-kai1989-1998, Istituto per gli studi micenei ed egeo-anatolici CNR, Roma. ??
23. Дьяконов И. М., Урартские письма и документы, Изд. АН, М.-Л., 1963, 144 с.

24. Ս. Հարությունյան, Ա. Քալանթարյան (Խմբ.), Գինին հայոց ավանդական մշակույթում, Ազրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն, ՀԱԻ, Երևան, 2005, էջ 12-30:
25. Арутюнян А. Ф., Очерки истории виноградарства и виноделия древней и средневековой Армении, Принтинфо, Ереван, 2005.
26. Пиотровский Б. Б., Ванское царство, Изд. Восточной литературы, М., 1959.
27. Арутюнян Н. В., Земледелие и скотоводство в Урарту, Изд. АН, Ереван, 1964.
28. Պետրոսյան Ա., Հայկական ավանդական դրամայի ակունքների շուրջ, Պատմաբանափրական հանդես, 2006, 2, էջ 256-284:
29. Հմայակյան Ա., Վանի թագավորության պետական կրոնը, ԳԱ հրատ. Երևան, 1990, 158 էջ:
30. Աբեղյան Մ. Երկեր, հ. Է, ԳԱ հրատ. Երևան, 1975, 671 էջ:
31. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Հայաստան հրատ. Երևան, 1970, 256 էջ:
32. Martirosyan H. 2020, Etymological dictionary of the Armenian inherited lexicon, Brill, Leyden, 988 p.
33. Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1973, հ. Բ, 687 էջ:
34. Дьяконов И. М., Старостин С. А., Хуррито-урартские у восточнокавказские языки, Древний Восток: этнокультурные связи, «Наука», М. 1988, с. 164-207.
35. Klimov G., Etymological dictioanaty of the Kartvelian languages, de Gruyter, Berlin, New York, 1998, 504 p.
36. Beekes R. S., Etymological Dictionary of Greek, Brill, Leiden, Boston, 2010, 1808 p.
37. Chantraine P., Dictionnaire étymologique de la langue grecque, Klincksieck, Paris, 1999, 1447 p.
38. Blažek V., Artemis and her family, Graeco-Latina Brunensia, 2016, 21/2, p. 39-50.
39. Monti O. 2002, Observations sur la langue du linéaire A, Kadmos 41, p. 117- 120.
40. Սութիասյան Ա. Մ. Հայոց լեզվ իհոմանիշներիբառարան, ԳԱ հրատ. Երևան, 1967, 685 էջ: